

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ

ԱՆԹՈՆԻՍ - ԼԻՏԱՆԱՆ

Անթիլիաս, 1 Ապրիլ 1982

Ամենապատիւ

Տ. Նիկիւ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Երուսաղէմ

Սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,

Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հրաւարած յարութեանի տօնի նախօրեակին, եղբայրական սիրոյ քաղցր պարտք կը զգանք անձնապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ողջունել Ձեր Սիրելութիւնը եւ յայտնել Ձեզի Մեր խնդութիւնը մեր Տիրոջ յուսովառ եւ կենսատու յարութեան տօնակատարութեան առիթով:

Յարութիւնը ոչ միայն համաքրիստոնէական պատմութեան, այլ նաեւ ու մանաւանդ մեր հայ ժողովուրդի պատմութեան մէջ բացառիկ նշանակութիւն եւ անհաւասարելի ազդեցութիւն գործած է, իր բարիքները տարածելով դարէ ի դար: Հայութիւնը յարութեան մէջ տեսած է ոչ միայն յոյս, այլեւ հոգեկան անսպառ եւ ամենայադէր ոյժ՝ դիմագրաւելու համար բոլոր տեսակի չարիքներն ու կեանքին դէմ իր տեսած սպառնալիքներն ու կործանումները:

Մեր սրտեանդն աղօթքն է որ յարութեան հաւատքը միշտ կենդանի եւ գործօն մնայ մեր ժողովուրդի կեանքին մէջ այսօր եւ յետագային, ի Մայր Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի:

Թող յարուցեալ Փրկիչը Ձեզի, Երուսաղէմի Մերոց Յակոբեանց Միաբանութեան եւ համայն ժողովրդեան պարգեւէ վերազարթնութիւն ամենալից տօրեւ եւ իր յարութեան շունչով կենսաւորէ Ձեր բոլոր գործերը ի սպասաւորութիւն Ամենակալ Աստուծոյ եւ պատուական մեր Հայ ժողովրդեան:

Մնամք եղբայրական սիրոյ ողջունելու

Աղօթակից

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ.

Խ Ո Ր Է Ն Ա.

Աթոռակից Կաթողիկոս

Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ



Ամեն. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրաւորեան

Պատրիարք Հայոց — Երուսաղէմ

Ձերդ Ամենապատուութիւն,

Հոգեւոր ցնծութեան հանդիսաւոր այս օրերուն, կը յղենք Ձեզ մեր սիրալիր շնորհաւորութիւններն ու սրտագին մաղթանքները՝ նոր ու արեւոտ օրերու: Քրիստոսի Յարութեան աւետիսով կ'ողջունենք Ձեզ, կրկնելով քաղցր ու չհինցող աւետիսը, որ գեղեցիկ ու խորհրդաւոր օր մը հրեշտակին բերնով տրուեցաւ իւղաբեր կիներուն՝

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Թող Յարուցեալ Փրկիչը առատօրէն հեղու կենդանաւոր իր շնորհները բոլոր իր սուրբ անուան հաւատացողներուն վրայ: Իր Յարութեան լոյսովը լուսաւորէ՛ մանաւանդ միտքն ու հոգին պետութեանց ղեկը իրենց ձեռքը առած քաղաքագէտներուն եւ ղիւանագէտներուն, որպէսզի խաղաղութիւնը ըլլայ տեւական ու տիրապետող՝ գեղահրաշ մեր մոլորակին վրայ:

Ձեր եղբայրը ի Քրիստոս՝

Պ Ի Մ Է Ն

Պատրիարք Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ

Ս. Զատիկ, 1982 — Մոսկուա

Ապրիլի 5ին, Հրէից Պատեքի (Բաղարջակերաց) տօնին առիթով, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայոց հետեւեալ հեռագիրը յղեց Իսրայէլի Պետութեան Նախագահ Իցհաք Նափօնի, Վարչապետ Մէնախեմ Պէկինի եւ այլ նախարարներու, ինչպէս նաեւ Երուսաղէմի Քաղաքապետ Թէտի Բօլլէքի եւ պետական բարձրաստիճան պաշտօնեաներու:

«Պատեքի տօնին ուրախ առիթով, հաճեցէք ընդունիլ մեր սրտագին եւ յարգալից շնորհաւորութիւնները եւ ջերմ մաղթանքները, Ձեր շարունակական առողջութեան եւ Հրեայ ժողովուրդի բարգաւաճման»: